

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Ղևոնդ Ալիշանը ծնվել է Պոլսում, 1820 թ. հուլիսի 6(18)-ին, դրամագետ-հնահավաքի (նումիզմատիստ-անտիկվար) ոչ բազմաճյուղյա ընտանիքում: 1832 թ. փոքր եղբոր՝ Սերովբե Ալիշանյանի հետ միասին մեկնել է Վենետիկ, Մխիթարյանների մոտ ուսումնառության, 1840 թ. պաշտոնապես ճանաչվել է որպես Մխիթարյան միաբանության անդամ: Այլևայլ առիթներով եղել է Հռոմում, Փարիզում, Վիեննայում, Բեռլինում, Լոնդոնում, Դենտում (Բելգիա), Միլանում, Բրյուսելում, սակայն երբեք չի եղել Հայաստանում: 1872 թ. մինչև իր կյանքի վերջը մշտապես ապրել է Վենետիկում, ավելի ճիշտ՝ Ս. Ղազար կղզում, և այստեղ էլ մահացել է 1901 թ. նոյեմբերի 9 (22)-ին:



Ալիշանը գրական անդաստան իջավ որպես բանաստեղծ: Նրա բանաստեղծությունների առաջին փունջը՝ «Երգչ Հանգրուանաց» հատկանշական վերնագրով, ունի 1840 թ. նշումը¹, թեև բացառված չէ, որ նա ավելի առաջ էլ գրած լինե՞ր զանազան ստեղծագործություններ, ինչպես չափածո, այնպես էլ արձակ:

Իսկ Մխիթարյան միաբանության ներսում «հայրերի» կողմից վաղուց արդեն մշակվել էին բանաստեղծելու այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնցից և ոչ ոք բացառություն կազմել չէր կարող: Այդ օրենքները պարտադրաբար ուսուցանում էին ամեն մի երիտասարդ ստեղծագործողի և, հասկանալի է, պայմանում նրանից, դրանք գրվում էին որպես գիտական տրակտատ՝ ի օգտագործումն հաջորդների²: Գեղարվեստական ստեղծագործության չափանիշ համարվող այդ օրենքները համառոտակի հետևյալներն էին: Պետք էր գրել անպայման «Վսեմական գրոց լեզուաւ» (Մխիթարյանները նույնիսկ մինչև XX դարի սկզբները շատ էլ հաշտ չէին աշխարհաբարի հետ): Ստեղծագործության համար որպես թեմա պետք էր վերցնել միայն «Բանք վեհադոյնք», այսինքն՝

¹ Տե՛ս «Նուագը», հատ. Բ, Վենետիկ, 1857, էջ 175—236:

² Տե՛ս էդ. Հյոսթմյուզյան, Առձեռն բանաստեղծություն, Վենետիկ, 1867:

աստված, Քրիստոս, սրանց հետ կապված այլևայլ դրվագներ, եկեղեցական զանազան տոներ ու արարողություններ, սակավ ղեպքում՝ հայոց պատմութան առավել նշանավոր դեմքերն ու ղեպքերը:

Այսպիսին էր զեղարվեստական գրականության համար մշակված այն ուղեծիրը, որով մինչև Ալիշանն ընկած մոտ հարյուր տարիների ընթացքում ընթանում էին Մխիթարյան բոլոր մեծ ու փոքր բանաստեղծները: Եվ հասկանալի է, որ պոեզիայի անդաստանում առաջին քայլերն անող քսանամյա Ալիշանը չէր կարողանալու և չէր էլ փորձելու հակադրվել իր նախորդներին՝ արդեն հաստատուն դարձած ու սրբազործված սովորույթներին. նախորդներ, որոնցից շատերը «գործող անձ» էին հենց իր ժամանակ: Եթե ասենք միայն, որ Ալիշանի հանդես գալու տարիներին հանրահայտ անուններ էին Գարրիել Ավետիքյանն ու Եղիա Թովմաճանը, հայության մեջ լայն ճանաչում ունեւ Մանվել Զախախյանը, իր գրական փառքի ղեկիթումն էր Արսեն Բազրատունին, ապա մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն: Եվ Ալիշանն էլ սկսեց ստեղծագործել իր նախորդների նման:

1857—1858 թթ. հրատարակված «Նուագրի» հինգհատորյակում տեղ գտած գործերի գերակշիռ մասը վերևում ասված բնույթն ու զաղափարական ուղղվածությունն ունեն և գալիս են մի անգամ ևս հավաստելու, որ Ալիշանը պատրաստվում էր միանգամայն օրինակելի ավանդապահ և «հայրերի» գործը հավատարիմ հնազանդությամբ շարունակող դառնալ:

Սակայն XIX դարի սկզբներից ծայր առած ոուս-թուրքական և ոուս-պարսկական պատերազմները հույսեր էին ներշնչում բաղմաշարշար հայությանը, որ մոտենում է պարսկական և թուրքական՝ ասիական տիպի բռնապետությունից ազատվելու բաղձալի րոպեն: Նշանակում է՝ հարկավոր էր ոտքի հանել հայ ժողովրդին և նրան կովելու, պատերազմով ազատությունը ձեռք բերելու անսրող կոչ անել: Հարկավոր էր փառաբանություններ հյուսել «վասն հայրենեաց» կովող քաջերին, նշավակել դավաճաններին ու դավաճանությունը, քաջալերանքի հորդոր կարգալ տատանվողներին: Իսկ այդ անել կարողանալու համար լավահառաջ աղոթքներն առ աստված, կամ նրան մշտապես հավատարիմ լինելու հավաստիացումները, կամ վշտակցությունը Քրիստոսի կրած շարշարանքների համար, կամ ներբողականը՝ միաբանություն եկած այս կամ այն նշանավոր անձի կապակցությամբ ասված և այլն,— այսպիսի «երկնային» թեմատիկայով գրված գործերն արդեն պիտանի չէին կարող լինել: Եվ Ալիշանը, որոշակիորեն բացազատվելով նախորդներից, բանաստեղծության համար սկսում է թեմաներ վերցնել հայ ժողովրդի պատմության առավել հերոսական դրվագներից, նորերին ևս այդ ոգով դաստիարակելու համար: Իրար են հաջորդում շոնդալից, մարտակոչային բնույթի բանաստեղծությունները՝ «Ի բամբոն հայկազնի», «Կարմիրն Վարդան», «Սեպուհն Վասակ», «Ի սուրբ Ղևոնդ», «Դատաստանք Վասակայ Մատնչի», «Ոգին Հայաստանեայց» և այլն, որոնք հայկական հայրենասիրական պոեզիայի լավագույն նմուշներից են:

Բանաստեղծությունը դարձնելով «Հայ մանկտեաց» ոգևորելու, նրանց «Ի ղէն, ի վրէժ» կոչելու միջոցներից մեկը, Ալիշանը, սակայն, աստիճանաբար կարողացավ ընկալել, որ ժողովրդին մինչև վերջ հասկանալի լինելու համար գրաբար լեզուն արդեն որոշակի խոչընդոտ է հանդիսանում: Եվ այստեղ էլ, ճշտորեն կարողանալով կողմնորոշվել լեզվի հարցում, դարձյալ որոշակիորեն բացազատվելով Մխիթարյան իր նախորդներից, նա իր ընտիր գործերը գրեց աշ-

իւարհարարով, թեև մինչև կյանքի վերջն էլ բացասական կարծիք ուներ այդ լեզվի մասին: Եւ Լիշանյան աշխարհաբարը, այսինքն մի լեզու, որը հատկանշական էր միայն և բացառապես Ալիշանին, նրանով սկսվեց և նրանով էլ վերջացավ: Այս բնույթի առաջին ստեղծագործությունը, որն ուներ «Նահապետ» կեղծանունը և որը թե՛ կատարման ձևի, թե՛ արտահայտած իմաստի տեսակետից նորություն էր ոչ միայն Ալիշանի գեղարվեստական ստեղծագործության, այլև XIX դարի սկզբի հայ գրականության անդաստանում, հրատարակվեց «Բազմավեպում» 1847 թ. հունիսին և ուներ «Հայոց աշխարհիկ» խորագիրը: Բանաստեղծությունը աղմկոտ հաջողություն ունեցավ: Հեռավոր Հրնդկաստանում Մեսրոպ Թաղիադյանը դրվատական առաջաբանով արտատպեց այն իր «Ազգասեր Արարատյանում», «Հայոց աշխարհիկի» որոշակի ազդեցության ներքո Պեշիկթաշլյանը պետք է գրեր իր մի քանի բանաստեղծությունները, իսկ Պոլսում գտնվող Արսեն Բագրատունին պետք է հիացական նամակ գրեր Վենետիկ, իր ծանոթ-բարեկամներին և խնդրեր տեղեկացնել իրեն, թե ո՞վ է Նահապետը, այդ «նորովի տաղանդը»: Է՛լ ավելի մեծ եղավ նույն թվականի հոկտեմբեր ամսին «Բազմավեպում» հրատարակված «Պոլսուն Ավարայրի» պոեմի գրական-հասարակական արձագանքը: Այսպես պետք է ստեղծվեր տասնմեկ բանաստեղծությունների այն վարդափունջը, որը հետագայում, 1860-ական թթ., պետք է ամփոփվեր «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքո և այդ ժամանակվանից սկսած առ այսօր դառնար մեր գրականության մնացուն արժեք ունեցող գործերից մեկը:

«Երգք Նահապետի» խորագրի ներքո զետեղված գործերը բազում վերահրատարակությունների արժանացան, զետեղվեցին այլևայլ ժողովածուներում, ալմանախներում, գրականության քրեստոմատիաներում, անթոլոգիաներում, թարգմանվեցին անգլերեն (Թարգմ. Ալիս Ստոն Բլաքվելլ), գերմաներեն (Թարգմ. Աբգար Հովհաննիսյան և Արտուր Լայստ), ֆրանսերեն (Թարգմ. Ա. Զոպանյան և Պոլ Ադամ), իտալերեն (Թարգմ. էմիլիո Տեզա), ռուսերեն (Թարգմ. Յու. Վեսելովսկի, Ս. Ումանեց, նորերից՝ Ս. Շերվինսկի) և արժանացան օտարազգի ընթերցող ու գիտական հասարակայնության ջերմ ուշադրությանն ու գովաբանական գնահատականին: Այդ բանաստեղծաշարն ի նկատի ուներ Միքայել Նալբանդյանը, երբ գրում էր, որ «արժանավոր վարդապետը չափաբերական քերթվածոց մեջ ախոյան շունի» և որ նրա գործերը «ջերմացույցեր են շատ սրտեր Նահապետի անունին վերա»: Եթե նկատի ունենանք, որ Նալբանդյանի՝ հայ գրողներին տրված գնահատականների մեջ սա ամենաբարձրն է, և եթե չմոռանանք, որ Նալբանդյանը բացասաբար էր տրամադրված դեպի Մխիթարյանները ու մի անգամ չէր, որ գրով և բանիվ հանդես էր եկել նրանց դեմ, ապա պարզ կդառնա վերոհիշյալ գնահատականի ամբողջ արժեքն ու նշանակությունը: Իր գրաբար հայրենասիրական պոեզիայով և առանձնապես «Երգք Նահապետի» բանաստեղծաշարով Ալիշանը հիմքից խախտեց կլասիցիզմը և հաստատուն կերպով ճանապարհ հարթեց գրական հաջորդ ուղղության՝ ռոմանտիզմի համար, ինքն, այսպիսով, դառնալով այդ ուղղության առաջին ներկայացուցիչներից մեկը մեր գրականության մեջ: Ալիշանի վերջին և, միաժամանակ, ամփոփող ու մի տեսակ ի մի բերող խոսքը հանդիսացավ «Հուշիկք հայրենյաց հայոց» հատկանշական խորագիրը կրող երկհատորանոյ արձակ պատմա-գեղարվեստական նշանավոր ստեղծագործությունը, որը հրա-

տարակվեց Վենետիկում 1869—1870 թթ. և որը հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում» 1862 թ. հունվարից սկսած:

Մինչև այդ էլ Ալիշանն իր կարողությունները փորձել էր գեղարվեստական արձակի բնագավառում³, սակայն այդպիսի մեծ թեմատիկ ընդգրկում ունեցող, այդպիսի լայն կտավով և գրական-գեղարվեստական այդպիսի բարձր վարպետությամբ գրված գործով նա հանդես էր գալիս առաջին անգամ: Եվ պատահական չէր, որ «Հուշիկք հայրենյաց հայոցը» երկու անգամ վերահրատարակվելու բախտին արժանացավ (1921 և 1944 թթ.), նրա այլևայլ գլուխները կառնվելու բախտին հատվածներ մեկից ավելի անգամ ղեկավարվեցին ղանաղան ժողովածուներում ու պարբերականներում, թարգմանվեցին եվրոպական լեզուներով («Թեոդորոս Սալհունի» գլուխը՝ ֆրանսերեն, 1827 թ. և «Կարմիրն Վարդան» գլուխը՝ իտալերեն, 1875 թ.), «Հուշիկքը» լույս աշխարհ գալուն պես ունեցավ իր ոճով ու ոգով գրող հետևորդներ⁴, ամբողջ գործի մասին տարբեր ժամանակներում ղրվատական գրախոսականներով հանգես եկան Գրիգոր Արծրունին, Աբրահամ Այվազյանը, Արշակ Զուպանյանը, Արսեն Տերտերյանը, Հրաչյա Աճառյանը և ուրիշներ:

Հայն կտավի արձակին անցնելը ուներ իր պատճառաբանությունը: Ալիշանի նպատակն էր՝ հայ ժողովրդի պատմության առավել հերոսական ղրվագների գեղարվեստական վերարտադրության միջոցով «Հայ մանկտիներին» դաստիարակել հայրենասիրության ոգով: Սկզբնական շրջանում, երբ հայի ու Հայաստանի փրկության հարցերը ղրվում էին համեմատաբար ընդհանուր ու բնորոշ ձևով, բանաստեղծությունն ու պոեմը բավարարում էին վերոհիշյալ նպատակին: Ծակայն 70—80-ական թթ., երբ իր ամբողջ լայնությամբ ու խորությամբ սկսեց առաջ քաշվել մեր ժողովրդի փրկության հարցը, երբ այն սկսեց ղիտվել ոչ թե որպես ղիվանագիտական ուրիշ խնդիրների բաղկացուցիչ մասը, այլ որպես միանգամայն ինքնուրույն, առանձնակի միավոր, որին նույնիսկ որոշակի անուն ու բովանդակություն տրվեց՝ «Հայկական հարց», երբ, վերջապես, մոտալուտ ազատության հույսերով ոգևորված՝ հայ ժողովրդի ավելի ու ավելի լայն ղանգվածներ սկսեցին ոտքի ելնել՝ պայքարով փրկվելու համար, այս պայմաններում բանաստեղծության ձևն արդեն շատ «նեղ» էր և շափաղանց փոքր հնարավորություններ էր ընձեռում: Եվ Ալիշանը վստահորեն անցնում է գեղարվեստական արձակի բնագավառը, ապացուցելով, ի դեպ, որ այդ աստիարեղում էլ նա նույն քաջամարտիկն է, ինչպիսին որ էր բանաստեղծությունների բնագավառում:

Ինչպես և պետք էր սպասել՝ «Հուշիկք հայրենյաց հայոցը» արտահայտում էր այն նույն հայրենասիրական, ազատասիրական տրամադրությունները, որոնց հանդիպել էինք բանաստեղծությունների առնչությամբ: «Ուզեր եմ,— այս առիթով գրում է Ալիշանը հիշյալ գործի առաջաբանում,— հայրենյաց սըրբաղան ղգացման մեծ վառարանեն մեկ-երկու կայծեր թափել ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայալղի համբակաց» (էջ 20): Այս նպատակն էլ ղիղեցիկ կերպով ի մի է ձուլում գրքի բոլոր 33 գլուխները, թեև առաջին հայաց-

³ «Հովիվք Շիրակա», «նուագը», հատ. Գ, ի դեպ՝ հինգհատորյա այս ժողովածուում եղած միակ արձակ գործը: «Ամսոց բնական նշանները», «Բազմավեպ», 1845: «Նվեր տղայոց», Վենետիկ, 1866:

⁴ Տե՛ս Հ ո վ հ. Թ ո ո ս յ ա ն, Ընտիր հայկաղոնք, Վենետիկ, 1873:

քից նրանք, հայոց պատմության ամենատարբեր շրջաններից վերցված թեմաների գեղարվեստական վերարտադրությունները լինելով, թվում է, թե իրար հետ ընդհանուր ոչինչ չունեն։ Այս իմաստով էլ ամբողջ «Հուշիկք հայրենյաց հայոցը» դարձել է ջերմ, կենարար ու սինթեզված հայրենասիրության մի յուրահատուկ գլուխ-գործոց։ Իրար հաջորդող հասարակական-քաղաքական դեպքերի ու իրողությունների վերարտադրումը՝ Հայաստան աշխարհի ներշնչված նկարագրությունը («Բնախոսություն Հայաստան աշխարհի»), Մուշեղ Մամիկոնյանի կոիլը արաբական հրոսակների դեմ Բագրևանդում («Բագրևանդա կոիլն»), Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի դաշտում մահանալով անմահանալը («Կարմիրն Վարդան»), «Հայոց Գուտտեմբերգի»՝ Աբգար դպիրի արած հրատարակությունների բնութագրությունը («Աբգար դպիր. հայ տպագրություն»), և այլն և այլն, — գալիս են նոր շուրջեր և հայրենասիրական նորանոր իրանգներ ավելացնելու գրքի վրա։ Այդ բորբոքուն հայրենասիրության հետևանքով «Հուշիկք հայրենյաց հայոցը» հրատարակվելուն պես հաստատուն կերպով ապահովեց իր տեղը հայ գրականության անդաստանում, դարձավ «պաշտելի գիրք» (Ա. Զուպանյան), որը մի շարք սերունդների համար հոգևոր դաստիարակության հզոր զենքերից մեկը հանդիսացավ։ Մինչև այսօր էլ չի հնացել Ալիշանի ջերմ հորդորը՝ ուղղված հայությանը. «Ո՛վ Հայկակ, ո՛վ հայ պատանիք, — գրում է նա, — աղեկ քաղաքացի ըլլալու համար պետք է քննել և սովորիլ զհայրենիս։ Քննեցեք և սովրեցեք ուրեմն այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր և դայակ ամենայն աշխարհի. քննեցեք այդոր բնակազմությունը, քննեցեք այդոր բարոյականը, քննեցեք այդոր բարգավաճումը ի հարուստ լեղվին, որ ապահով գրավական մ'է բազմատեսակ արկածներով հնձված գրականությանը»։

Ալիշանի արձակ գեղարվեստական ստեղծագործությունների գործի շարունակողները դարձան մեր դասական արձակագիրներից Ռաֆֆին, Մուրացանը, Մերենցը, որոնց գործերին ծանոթանալիս չի կարելի չնկատել «Քաղցրազրույցիկ նահապետի» որոշակի ազդեցությունը։

Մինչև իր կյանքի վերջն էլ շարունակեց ստեղծագործել Ալիշանը (վերջին բանաստեղծությունը, նվիրված Մխիթարյան միաբանության հիմնադրման ևրկուհարյուրամյա հոբելյանին, գրել է 1901 թ. սեպտեմբերին, այսինքն՝ մահվանից երկու ամիս առաջ), սակայն հետագա շրջանի նրա գործերը արդեն որոշիչ չեն հանդիսանում ինչպես Ալիշան-ստեղծագործողի համար, այնպես էլ հայ գրականության բնագավառում։ Իր գրա-պատմական խոշոր և որոշ իմաստով անփոխարինելի դերը կատարելով XIX դարի 60—70-ական թթ. ժամանակահատվածում, հանդիսանալով այդ ժամանակաշրջանը նախապատրաստողներից մեկը, Ալիշան-գեղարվեստագիրը նույն 70-ական թթ. սկսած, աստիճանաբար սկսեց լիջել իր դիրքերը, ճանապարհ տալով Ալիշան-գիտնականին։

~ * ~

Գիտական փոքրածավալ հոդվածներով, որոնք ավելի շուտ գիտահանրամատչելի մակարդակով գրված հաղորդումների բնույթ ունեն, Ալիշանն սկսեց հանդես գալ դեռ 40-ական թթ. սկսած, իրենց պարբերականի՝ «Բազմավեպի» էջերում։

Առաջին ծավալուն (մոտ 800 էջ) աշխատությունը, որով Ալիշանը հայտ էր ներկայացնում գիտության բնագավառը մտնելու համար, ուներ «Քաղաքական

աշխարհագրութիւն նկարացոյց պատկերօք» խորագիրը, հրատարակվել էր Վենետիկում, 1853 թ., և, որ կարեւոր է՝ գրքի ճակատին նշված էր «Հաւաքեաց հ. Ղեռնգ Մ(արդարի) Ալիշանեան»։ Այս մեկ հատիկ «հաւաքեաց»-ը արդեն բավարար հստակությամբ բացահայտում է աշխատության թե՛ ստվերոտ և թե՛ լսւածովոր կողմերը։ Ձեռնամուխ լինելով գրելու երկրագնդի բոլոր աշխարհամասերում եղած բոլոր մեծ ու փոքր պետութիւնների (ընդհուպ մինչև քաղաք-պետութիւն Մոնակո, Նուրիա, Եթովպիա, Սուդան, Լիբերիա) աշխարհագրութիւնները իրենց քաղաքական-հասարակական բնութագրութիւններով, Ալիշանը, հասկանալի է, իրեն հարկավոր նյութը ծաղկաքաղ էր անելու ավելայլ (մեծ մասամբ եվրոպական) աշխարհագրագետների աշխատութիւններից։ Սա էլ նշանակում էր, որ հեղինակը, եթե չասենք ոչ մի, համենայն դեպս շատ փոքր քանակով նորութիւն կամ ինքնուրույն խոսք պետք է ունենար ասելու Ահա թե ինչու Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւնը...» դարձավ մի տեսակ ծանոթ փաստերի, հանրահայտ եղելութիւնների, ասված-կրկնված գեպերի ու իրադարձութիւնների հավաքածու, որը, հենց սկզբից իսկ, իջեցրեց զրբի գիտական-ճանաչողական արժեքը։ Ներշնչող էր ու սպասելիքների տեղ թողնող «Քաղաքական» բառը, որն ավելացրել էր Ալիշանն իր գրքի վերնագրի եկղբում, որովհետև այդ բնույթի գործ, եթե, իհարկե, այն արվեր ինչպես որ պետք էր, կլիներ աննախադեպ ոչ միայն Մխիթարյանների մոտ, այլև մեր ամբողջ գիտական գրականութիւն բնագավառում։ Չմոռանանք, որ աշխատութիւնը գրվել էր 1853 թ., այսինքն՝ երբ արդեն տեղի էին ունեցել ֆրանսիական՝ 1799 և 1848 թթ. հեղափոխութիւնները, իտալական՝ 1848—1849 թթ. հեղափոխութիւնն ու Վենետիկի հերոսամարտերը (վերջինին, ի դեպ, անձամբ ականատես և ակնաչափոր էր ինքը), Անգլիան կատարել էր գաղութատիրական բնույթի իր նվաճումների գերակշիռ մասը, տեղի էին ունեցել Ամերիկայի հանրահայտ անկախութիւն պատերազմները և այլն։ Երևույթներ էին սրանք, որոնց չէր կարող չանդրադառնալ քաղաքական աշխարհագրութիւն գրողը, և, որ անհամեմատ ավելի կարեւոր էր՝ չէր կարող իր ինքնուրույն վերաբերմունքը ցույց չտալ։ Այդ անելուն, սակայն, խանգարում էին շատ հանգամանքներ։ Բոլոր այն դեպքերում, նրբ անհրաժեշտ էր տալ տվյալ երևույթի քաղաքական բնութագրականը; կամ բացահայտել նրա հասարակական նշանակութիւնը, կամ վեր հանել նրա դերը տվյալ հասարակական-պատմական պրոցեսում, Ալիշանը բավարարում է մեկ-երկու բնօրինակ նախադասութիւններով, անում մի քանի սառն, անկիրք նկարագրութիւններ և զրանով հարցը փակում։ Ահա, օրինակ, ֆրանսիական Մեծ հեղափոխութիւնը տրված Ալիշանի բնութագիրը. «Լիւդովիկոս Փիլիպոս (իմա Լուի-Ֆիլիպ—Ս. Շ.) որ և թագաւոր Գաղղիացուց կոչուէր, և ատեանք կրկին հաստատեալ կային, ոչ զիջանէր նոցա (իմա ժողովրդին—Ս. Շ.) ի կամս իւրեանց, խռով մեծ յարուցին ի 24 փետրուարի 1848 ամին, որ և զմտալիա և զԳերմանիա զզրղեցոյց, թաղաւորն ամենայն տամբ իւրով փախաւ յԱնգղիա և անդ մեռաւ (1850 թ.)։ Իսկ Գաղղիացիք, յետ իննամսեայ տեղակալ իշխանութեան՝ կարգեցին հասարակապետութիւն, նախագահ՝ ընտրեալ զԼուդովիկոս Նապոլեոն, զեղբորորդի մեծի ինքնակալին, որ ետ երից ամաց (դեկտեմբեր 2, 1851 թ.) բռնաբարեաց (իմա տիրացավ, նվաճեց—Ս. Շ.) զիշխանութիւն վարչութեան աշխարհին» (էջ 159)։ Այս է բոլորը. այս է «Քաղաքական աշխարհագրութիւն» խորագիրն ունեցող աշխատության մեջ ֆրանսիական հեղափոխութիւնը տրված քաղաքական բնութագրականը։

Այսպիսի հատվածներ կարելի է էլի բերել, որոնք նորից գալիս են ապացուցելու, որ Ալիշանի սույն աշխատությունը խոտելի կողմեր ունենալով խարհում տեղի ունեցած կարևոր երևույթների քաղաքական-հասարակական բնութագրության տեսակետից: Իսկ այս բոլորի հետևանքով հասկանալի է դառնում, թե ինչու «Քաղաքական աշխարհագրությունը», շնայած կոկիկ, պատկերավոր բառ ու բանին, մեծ ճշգրտությամբ ու խնամքով գծագրված և առ այսօր էլ չհնացած քարտեզներին ու տեղացույցներին, չդարձավ այն, ինչ դարձան Ալիշանի մյուս աշխատությունները: Սկզբնական շրջանում այն օգտագործվեց որպես դասագիրք Մուրատյան և Ռափայելյան վարժարաններում, սակայն քանի որ աշխատությունը չէր գրված որպես այդպիսին, չկարողացավ բավարարել դպրոցական դասագրքի համար ներկայացվող պահանջները:

Եթե այդպիսի ճակատագիր վիճակվեց Ալիշանի առաջին աշխատությանը, ապա պատկերը մեկից փոխվեց հաջորդ՝ «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության առիթով, որը լույս աշխարհ եկավ նախորդից երկու տարի հետո, 1855 թ. կեսերին Վենետիկում (105 էջ)՝ «Տեղագիր Հայոց Մեծացը» աղմկոտ հաջողություն ունեցավ: Նրա մասին դրվատական ու հմտալից դրախոսականով հանդես եկավ Մարի Ժան Բրոսսեն, իսկ տարիներ հետո, 1869 թ., ամբողջ աշխատությունը, ֆրանսիացի հայագետ էդուարդ Դյուլորիեի թարգմանությամբ, ընդարձակ ներածականով ու ծանոթագրություններով, հատվածաբար սկսեց հրատարակվել «Ժուռնալ Ազիատիկում», ըստ որում, Դյուլորիեի՝ աշխատությանը տրված գնահատականները ավելի դրվատական են, քան Բրոսսենինը: «Տեղագիր Հայոց Մեծացը», իբրև պատմական Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ հմտալից տեղեկատու ձեռնարկ, դարձավ Հայաստանի պատմությամբ ու աշխարհագրությամբ զբաղվողների սեղանի գիրքը, հրատարակության առաջին իսկ օրվանից սկսած ընդհուպ մինչև մեր ժամանակները:

Ի տարբերություն իր նախորդ աշխատության, Ալիշանն այս անգամ ուսումնասիրության նյութ է դարձրել միայն և բացառությամբ պատմական Հայաստանի աշխարհագրությունը: Տրված է Հայաստան աշխարհի «բնական նկարագիրը», այսինքն՝ գետեր, լեռներ, տարբեր վայրերի կլիմայական բնութագրականներ, կենդանիների ու կենդանական աշխարհի գիտական նկարագրություն, արհեստների տեսակներն ու որ գավառներում տարածված լինելը: Ապա հաջորդում է պատմական Հայաստանի նահանգների (Վասպուրական, Սյունիք, Երցախ, Այրարատ, Տայք և այլն) պատմա-աշխարհագրական նկարագիրը, շարադրվում է տվյալ վայրերում գտնվող հնությունների (օր. էջմիածնի Մայր տաճար, Վանա բերդ և այլն) գիտա-բանասիրական պատմությունը և այդ հենքի վրա արվում են պատմական և աշխարհագրական բնույթի ուշագրավ եզրակացություններ: Աշխատությունն ավարտվում է տեղանունների մանրակրկիտ ցանկով:

«Տեղագիր Հայոց Մեծացը» շրջադարձային կետ հանդիսացավ Ալիշան-մտավորականի կյանքում: Այդ աշխատությունից սկսած Ալիշանն այլևս երբեք չանդրադարձավ «համաշխարհային» բնույթի աշխարհագրություններ գրելուն, այլևս երբեք չդիմեց հեռավոր ու մոտակա զանազան երկրների աշխարհագրությունների քննությանը և վերջնականապես դիմադարձ եղավ դեպի Հայաստան երկիրը: Այս հանգամանքը հղի էր բազում դժվարություններով, որոնցից ամենակարևորը թերևս այն էր, որ Ալիշանը ձեռնամուխ էր լինում տեղագրելու մի

երկիր, որտեղ ոչ միայն ինքը ոչ մի անգամ չէր եղել, այլև հենց այդ երկրի՝ Հայաստան աշխարհի մասին եղած վերջին շրջանի պատմա-աշխարհագրական աեղեկությունները ծալրաստիճան կցկտուր էին, հակասական, ավելի շուտ իրար բացասող, քան լրացնող։ Եվրոպացի և հայ մի քանի ճանապարհորդների հայանցիկ և ոչ մասնագիտական նկարագրություններ, պարբերականներում հրատարակված և տեղեկատուական բնույթ ունեցող՝ հայկական մեկ-երկու նահանգների տեղագրումներ, Աբել Մխիթարյանի, Մեսրոպ Սմբատյանի, Քաջ-բերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) և ուրիշ պատկանող մի քանի մեծ ու ժոթր պրակներ. ահա թերևս այն ամենը, ինչ Հայաստանի վերաբերյալ կարող էր հաղորդել XIX դարի գիտական միտքը։ Այս էր պատճառը, որ Ալիշանը սկզբից իսկ հրաժարվեց գիտական աշխարհագրություն գրելու՝ լայնորեն տարածում ունեցող արևելական կրթության, ըստ որի՝ տրվում են տվյալ երկրի բնության ու բնակչության նկարագիրը, գետերը, լճերը, տարբեր տեղերում նրանց լայնություններն ու խորությունները, նկարագրվում են լեռներն ու լեռնաշղթաները, նրանց բարձրություններն ու ապարային կազմությունները, թվարկվում են տվյալ երկիր ներմուծվող և այդ երկրից արտահանվող ապրանքները և այլն. այդ ամենը նշվում էր և դրանով ու այդ սահմաններում էլ ամեն ինչ ավարտվում։ Ալիշանը նախ՝ առաջին պլանի վրա քաջեց տվյալ նահանգի, ասենք՝ Սիսականի կամ Այրարատի գիտա-բանասիրական ամբողջ պատմությունը, սկսած հին-հնագույն ժամանակներից մինչև իր օրերը, քննական վերլուծության բովանդակացնելով, տվեց տվյալ գավառի ըստ հնարավորին ճշգրտված պատմա-աշխարհագրական բնութագիրը։ Սրա հետ միաժամանակ և նույն պլանով տրված են նահանգում եղած նշանավոր քաղաքների (ասենք՝ էջմիածին, Գյումրի կամ Երևան) մանրակրկիտ պատմությունն ու աշխարհագրությունը, տվյալ գավառի հետ կապված բոլոր նշանավոր դեպքերի (օր. Անիի ավերումը, Երևանի գրավումը, կաթողիկոսական աթոռի փոխադրությունը Կլիկիայի Սիս քաղաքից) հանդամանալից վերլուծությունը։ Աչքաթող չեն արվել և հայ մշակույթը ստեղծող, դարգացնող ու պահպանող կենտրոնները, կամ, ինչպես սիրում էր արտահայտվել Ալիշանը, «Վանորայք և անապատք»։ Տրված են, օրինակ, Հոռոմոսի (կամ Խոշավանքի) պատմա-աշխարհագրական ամբողջ տեսությունը, այնտեղ եղած հին ու նոր արձանագրություններն ու նրանց վերծանումները, վանքի նշանավոր վանահայրերի ըստ հնարավորին ամբողջական կենսագրությունը, վանքում եղած գրչագրերի ընդհանուր բնութագրությունը (տե՛ս «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 18—33)։ Մանրակրկիտ կերպով նկարագրված են Սիս քաղաքում եղած կարևոր շինությունները (Կաթողիկոսարան, Ռուբինյանների ապարանք), հոգևոր ու մշակութային կենտրոն հանդիսացող հաստատությունները, շարադրվում է ներսես Լամբրոնացու համալսարանի պատմությունն ու տեսությունը, որն ավարտվում է տեղում ապրած հայ նշանավոր մտավորականների կյանքի ու գործունեության ուրվագծմամբ (տե՛ս «Սիսուան և Լեոն Մեծագործ», Վենետիկ, 1885, էջ 211—230)։ Նույն բնույթի մանրամասնություններ էլ, վերջապես, հաղորդվում են Այրարատ աշխարհում գտնվող Այրիվանքի կամ Գեղարդավանքի կապակցությամբ⁵ և այլն, և այլն։ Այսպիսի, գերմանացի գիտնական Ռենոյի տերմինով ասած, «պատմա-բանասիրական աշխարհագրությունների» ստեղծումով Ալիշանը նոր էջ բացեց հայ աշխարհա-

⁵ Տե՛ս «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 334—351։

գրադիտության և պատմագիտության բնագավառում, որովհետև կարողացաւ տաղանդավոր կերպով մեկը լրացնել մյուսով և մեկը պատճառաբանել, բացատրել ու ամբողջացնել մյուսով: Աշխատություններ էին դրանք, որոնցում աշխարհագրագետն իր համար, պատմաբանն իր համար, գրականագետ-բանասերն իր համար, հայկական ճարտարապետությամբ հետաքրքրւովողն իր համար, վիճաբանն իր համար, լեզվաբանն ու հայոց լեզվի մասնագետն իր համար,— և այս թվարկումը կարելի է էլի շարունակել,— կարող են անբավ ու անբանակ նյութ գտնել գիտական ուսումնասիրության ու քննության համար: Ավելացնենք այս բոլորին գրավիշ, վառվռուն լեզուն, պատմելու ու վերլուծելու աշխույժ, «ալիշանյան» եղանակը, պատկերավոր մտածողությունն ու ինքնատիպ գրելաոճը, և հասկանալի կդառնա, թե ինչու Ալիշանի «պատմա-բանասիրական աշխարհագրությունների» հատորները դարձան ժամանակի և հետագայի հայ, և ոչ միայն հայ, մտավորականների սեղանի գիրքը: հատվածաբար կամ ամբողջովին թարգմանվեցին եվրոպական զանազան լեզուներով («Նշմարք և նշխարք Հայաստանին» թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, «Սիսուանը»՝ ֆրանսերեն, «Հայ-Վենետը»՝ իտալերեն), նրանց մասին դրվատական գրախոսականներով հանդես եկան հայկական և օտար բազմաթիվ պարբերականներ: Բավական է թեկուզ թեթևակի թերթել XIX դարի վերջի հայկական ցանկացած թերթերն ու ամսագրերը, համոզվելու համար, թե ինչպիսի մեծ հիացմունքով էին արտահայտվում ժամանակակիցները Ալիշանի վերոհիշյալ աշխատությունների մասին:

Այս ամենի համամիասնությունը և մանավանդ «Տեղագիր Հայոց Մեծացի» գտած բարեկամական ընդունելությունը պատճառ դարձան, որ Ալիշանը, 1860-ական թթ. սկսած, հղանա իր վիթխարիությամբ աննախադեպ մի ծրագիր, որի ապշեցուցիչ չափերը անգամ այսօր դժվար է պատկերացնել: Հիշյալ ժամանակաշրջանից սկսած, նա ձեռնամուխ եղավ պատմական Հայաստանի բոլոր տասնհինգ նահանգների (իր լեզվով ասած՝ «աշխարհների»), հետևաբար և՛ 191 գավառների մասին պատմա-աշխարհագրական ուսումնասիրություններ գրելուն, որը, ըստ հեղինակի նախնական մտահղացման, պետք է ղեկեղվիր 20—22 մեծագիր հատորներում: Այդ անել կարողանալու համար նա նախ՝ սկսեց ամենալայն գրագրություններ հայ, ռուս ու եվրոպացի բազմաթիվ գիտունների հետ, գրելով ամենազանազան բնույթի ու բովանդակության ավելի քան երեք հազար նամակ: Սկսեց ամենայն ուշադրությամբ կարդալ ու վերակարդալ իրենց մոտ եղած մինչև երեք հազար հինգ հարյուր հայկական ձեռագրերը, պատմական Հայաստանի զանազան գավառների վերաբերյալ ըստ հնարավորին ամեն տիպի տեղեկություններ դուրս գրելու և դասդասելու համար: Սկսեց իր ժամանակի գիտության մակարդակի քննական բովով անցկացնել ամբարած վիթխարի նյութը, առավել ճշմարտացին ու հավանականը մյուսներից տարրորոշելու, կասկածահարույց փաստերն ու իրողությունները նորից ու նորից ստուգելու համար: Հեշտ է պատկերացնել, թե այդ բոլորից հետո ինչպիսի արժեքավոր գործ կլիներ այդ հատորներից յուրաքանչյուրը, և թե ինչպիսի տեղ ու դեր կունենային դրանք մեր գիտության մեջ: 1881 թ. հրատարակված «Շիրակ» աշխատությունը եկավ ազդարարելու վերոհիշյալ խոշոր ձեռնարկման անդրանիկ պտուղը. ի դեպ, Ալիշանի աշխատություններից առաջինն ու միակը, որի ձեռագրերը հեղինակը, ի նշան առ հայրենիքն ունեցած խան-

դակաթ սիրո, հանձնել էր Հայաստան ուղևորվող Մխիթարյան հայրերից մեկին Ախուրյան գետի ալիքների մեջ նետելու համար⁶։

Հայկական բոլոր մեծ ու փոքր «աշխարհներից» նախ և առաջ պատմական Շիրակը տեղագրության և ուսումնասիրության նյութ դարձնելը, որն առաջին հայացքից նույնիսկ տարօրինակ ու անբացատրելի է թվում, ուներ իր հետևյալ ներքին պատճառաբանությունը։ Շիրակը Հայաստանի այն նահանգներից էր, որը, ասես փոքրացված ձևով, իր մեջ խտացրել էր մեր ժողովրդի հին ու նոր պատմությունն ու աշխարհագրությունը իրենց համապատասխան հասարակական-քաղաքական դրսևորումներով։ Այդ գավառում էր «ղխիղճըն վիրաւոր ազգին մերոյ»՝ Անին, որը պատմությունը հայտնի էր դեռ V դարից, որին հետագայում, 961 թ. վիճակվեց դառնալ Բագրատունիների աթոռանիստը և որին, ցավոք, սպասում էր ավերակ դառնալու դաժան ճակատագիրը։ Գերազանցապես այս նահանգում էին գտնվում հայ ժողովրդի մտավոր կյանքում որոշակի դեր կատարած հոգևոր կենտրոնները (Կարմիր վանք կամ Դպրեվանք, Հոռոմոսի վանք, Տեկորա վանք, Մարմաշեն, Հատիճա վանք և այլն), որոնց պատմական դերն ու նշանակությունը հաղիվ թե հնարավոր լինի գերազնահատել։ Եվ վերջապես՝ XVIII դարի վերջից ժայռ առած ոռոս-թուրքական պատերազմների ընթացքում, ստրատեգիական տեսակետից իր առանձնահատուկ դիրքի հետևանքով, ռազմական գործողությունների գերակշիռ մասը սեղի ունեցավ այս գավառում (1854 թ. օգոստոսի և 1877 թ. հուլիսի Քյուրակ-Դերեի ճակատամարտերը, 1877 թ. հուլիսի Բաշ-Քեդիկլարի ճակատամարտը, Կարսի տուրեառի հետ կապված մի քանի ճակատամարտերը և այլն)։ Եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ Շիրակը հայկական մյուս նահանգների համեմատությամբ փոքր-ինչ ավելի շատ էր քննության ու գիտական նկարագրության նյութ դարձել ինչպես եվրոպացի (Ժ. Թալերնիե, Պ. Թուրներ-Ֆոր, Վ. Համիլտոն, Կ. Կոխ, Ե. Բորե), այնպես էլ հայ (Ա. Երիցյան, Մ. Բժըշկյան, Հ. Շուհիաթունյան, Ս. Ջալալյան, Ա. Մխիթարյան) երկրախույզների կողմից, ապա հասկանալի կդառնա, թե ինչու Ալիշանն իր սկսած գործը պետք է իրագործեր առաջին հերթին անդրադառնալով պատմական Շիրակին։

Աշխատությունը գրված է գիտա-աշխարհագրական ուսումնասիրություն գրելու այն մեթոդով, որի առաջին կիրառողը եղավ ինքը՝ Ալիշանը, և որի բնութագիրը համառոտ տրվեց վերևում։ Գավառում գտնվող յուրաքանչյուր տեղավայրի կապակցությամբ հեղինակը ոչ միայն հաղորդում է տեղագրական-աշխարհագրական բնույթի բազմապիսի տեղեկություններ, այլև տալիս է նրա՝ ըստ հնարավորին լրիվ պատմությունը, հրապարակում է տվյալ վայրում եղած արձանագրությունները, հիշատակում է քիչ թե շատ նշանավոր գործիչներին ու նրանց կատարած դրոժերը և այլն։ Բանը նույնիսկ հասնում է այնտեղ, որ Արևմտյան Շիրակի գյուղերից մեկը նկարագրելիս հեղինակը բնութագրում է այն բոլոր ծաղկատեսակները, որոնք աճում են նրա շրջակայքում (էջ 10—13), իսկ անդրադառնալով Անի քաղաքին, մեկ առ մեկ թվարկում է առ այդօր հայտնի բոլոր՝ քիչ թե շատ նշանավոր աղբյուրներն իրենց անուններով (էջ

⁶ Ահա թե ինչ է նշում այս կապակցությամբ Ալիշանի կենսագիրը. «Վանքի քահանաներեն մին, գեպի Մեծ Հայաստան ուղևորվելու ատեն, հ. Ալիշան, իր տեղադրական գործերեն անդրադառնալով Շիրակա ձեռագիրներն, կհանձնե անոր, և կխնդրե, որ զայն իբրև պարզև հայրենյաց, նետե Ախուրյան գետը» (Ս. Երևմյան, Կենսագրություն հ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 192)։

34—37): Այս ամենը մի անգամ ևս հավաստում է, որ հանձին «Շիրակի» հայ ժողովուրդը ստացավ ինքնաբավ ու յուրահատուկ մի աշխատություն, որն իր տեսակի մեջ նախորդը չուներ: Այս էլ իր հերթին ըմբռնելի է դարձնում, թե ինչու «Շիրակը» սկզբնական շրջանում դավաժանների արժանանալով հանդերձ, որոշ խորհրդածությունների և նույնիսկ տարակուսանքների տեղիք տվեց: Ալիշանի աշխատությունը շատ էր ինքնատիպ, շատ էր տարբեր ընդունված իմաստով աշխարհագրություն հասկացողությունից և այդ պատճառով էլ հասկանալի է դառնում «Մշակի» գրախոս Հ. Առաքելյանի այն ղգույշ դիտողությունը, թե քանի որ հեղինակը մտադրվել է գրել Շիրակի աշխարհագրությունը, ապա լավ չէ՞ր լինի գիրքը «բեռնաբարձել» պատմական, բանասիրական, բանաստեղծական և այլ տիպի նյութերից, որոնք կարելի կլինեին որևէ այլ առիթով օգտագործել:

«Շիրակից» չորս տարի հետո, 1885 թ., վենետիկում հրատարակվեց «Սիսուան և Լևոն Մեծագործ» խոշագիրը կրող՝ Ալիշանի հաջորդ աշխատությունը, որը պալիս էր հավաստելու, որ նրա հեղինակը շարունակում էր հաստատական մորեն իրականացնել ամբողջ Հայաստանը տեղագրելու վերաբերյալ իր վիթխարի մտաճշտումը: Աշխատությունը նախապես որոշված էր կոչել «Կիլիկիա», քանի որ այն, ըստ էության, վերաբերում էր Կիլիկիայի աշխարհագրությանն ու պատմությանը, սակայն հետագայում, և հավանաբար վերջին բուպեններին, այդ պլանը փոխվում է: Ալիշանն իր աշխատությանը կցում է «Լևոն Մեծագործ» ընդարձակ պատմական ուսումնասիրությունը (100 մեծագիր էջ), որը նա գրել էր ավելի առաջ և մտադրված էր եղել առանձին հրատարակել: Հետևելով ինչպես արաբական ու ասորի պատմիչներին, այնպես էլ մեր Գրիգոր Տղային, որոնք պատմական Կիլիկիան իր աթոռանիստ քաղաքի՝ Սիսիանունով կոչում էին Սիսուան, նա իր աշխատությունն էլ վկայակոչել է այդ ձևով և այդպես էլ հանձնել հրատարակության: Մեղ համար ուշագրավ է նաև այն խոստովանությունը, որ հեղինակը ինչ-ինչ պատճառներից ելնելով «Սիսուանի» համառոտությունն է ներկայացրել հրատարակության («բուն հարի թափել ի կորստենէ... գիծս և նիշս (իմա աշխատությունս—Ս. Շ.), և ամփոփել թեև ոչ ղբովանդակն յայսմ մատենի»), ավելի ամբողջականն ու լրիվը վերապահելով ապագային:

«Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատությանը թեկուղ Թեթևակիբենն ծանոթանալիս աչքից չի վրիպում այն ղգուշավոր, որոշ դեպքերում թեական սոնը, որով գրում է հեղինակը: Կատարված եղրահանգումների, տրված ապացուցումների, արված հիմնավորումների մեծագույն մասն ունեն «կարծեմ», «թուի», «որպես ասեն», «աղօտ ինչ նշմարք իցեն», «ստուգապէս ոչ գիտեմ» և այլ այս կարգի ինքնապահովագրիչ արտահայտություններ: Եվ այս հանգամանքը միանգամայն հասկանալի է: Ալիշանը նախ ձեռնամուխ էր եղել տեղագրելու մի երկիր, որը մոտ չորս հարյուր տարի էր արդեն, ինչպատմություն էր դարձել և, հետևաբար, վաղուց դասվում էր «մեռած աշխարհների» շարքը: Եթե, օրինակ, «Շիրակը» տեղագրելիս այդ երկրի հետ կապված այս կամ այն հարցը ճշգրտելու համար հեշտությամբ կարող էր դիմել տեղի իր ծանոթ-բարեկամներին, կարող էր նրանցից խնդրել պարզաբանելու այս կամ այն երևույթը, ճշտելու տվյալ փաստը կամ լրացուցիչ մանրամասներ հա-

զորգելու մեկ այլ փաստի վերաբերյալ և այլն, մի բան, որն, ի դեպ, նա անում էր լայնորեն, ապա Կիլիկիայի վերաբերյալ այդպիսի մոտեցումը սկզբից իսկ բացառված էր: Եթե չհաշվենք երկու-երեք եվրոպացի աշխարհագրագետների (Հ. Կիպերտ, էդ. Ռիան կոմս, Վ. Լանգլուա), որոնք XIX դարի կեսերին անցել էին պատմական Կիլիկիայով և ըստ իրենց կարողությունների ու հնարավորությունների տեղագրել այն, ապա աշխատության համար նյութաթողովքը Ալիշանը հիմնականում կատարելու էր հայ (Մատթեոս Ուռհայեցի, Աղաթանգեղոս, Սամվել Անեցի, Վահրամ Բաբունի, Սմբատ Գունդստարլ) և եվրոպացի (Մախերաս Կիպրացի, Հովհաննես Դարդել, Ֆրանչեսկա Ռիվոլա, Աբուլֆարաջա Ասորի) պատմիչների զանազան գործերից: Այստեղից էլ բնականորեն ծայր էր առնում աշխատության հետ առնչվող մյուս դժվարությունը՝ հավաստին ու անհավանականը պարզելը, փաստերը ըստ հնարավորին ճշգրտել կարողանալը: Այս դժվարությունը առավել կամ պակաս չափով առկա է եղել Ալիշանի բոլոր աշխատությունների կապակցությամբ, բայց այն ամբողջ խորությամբ ծառացավ «Սիսուան և Լևոն Մեծագործ» ուսումնասիրությունը գրելու ընթացքում: Այդ այն պատճառով, որ Կիլիկյան Հայաստանի տեղավայրերը, քաղաքները և այլն, կախված տարբեր ժամանակվա նվաճողների քմահաճույքներից, բազում վերանվանումների էին ենթարկվել, որոնց ճշգրտումները միայն մեծ հոգնությունների հետ էին կապվում: Բերենք միայն մեկ օրինակ. եվրոպական մի քանի աղբյուրներ հանգամանորեն նկարագրում են Կիլիկյան Հայաստանի հարավում, Միջերկրական ծովի ափին գտնվող մի քաղաք և տալիս են քաղաքի անունը՝ Կորակեսիոն: Սկսած XII դարից, աշխարհագրական վերոհիշյալ կոորդինատներն ունեցող վայրում դարձյալ նկարագրվում է մի քաղաք, որը, սակայն, կոչվում է Կալոնորոս: XIV դարի արաբ ճանապարհորդ ու մատենագիր Իբն Բատուտան այդ նույն վայրում հիշատակում է գեղատեսիլ մի քաղաք, որին, սակայն, տալիս է Կոլինդարա անունը: Եվ, վերջապես, Միքայել Ասորին ու Հեթում պատմիչը այդ նույն վայրում գիտեն Կանդելորոս անունով մի քաղաք, որը երբեմն անվանում են Լաերտ: Հարց է ծագում. գործ ունենք նույն քաղաքի տարբեր անվանումների հետ, թե՞ տվյալ դեպքում առկա են տարբեր քաղաքներ, և քանի՞ քաղաքներ: Հարց է սա, որին պատասխանելու հետ կապված ամբողջ բարդությունը համապատասխան մեկնաբանումների կարիք չունի: Իսկ այս կարգի պարզաբանումների թիվը մեկից ավելի էր, շատերը Ալիշանը կարողացավ ճշտել, եղան շատերն էլ, որոնք մնացին չճշտված: Այս բարդությունն է ահա, որ «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության հեղինակին հաղորդել է որոշ զգուշավորություն:

Դրանով հանդերձ, տարիների հետևողական աշխատանքի արդյունքն այն եղավ, որ հայ ժողովուրդն ստացավ նմանը չունեցող մի աշխատություն, նվիրված պատմական Կիլիկիային, և որը հրատարակվելու օրվանից սկսած հայ և եվրոպացի մասնագետների դրվատանքին արժանացավ:

Ե՛լ ավելի չերմորեն ընդունվեց և հասարակական-քաղաքական տեսակետից մեծ արձագանք գտավ Ալիշանի հաջորդ նշանավոր ուսումնասիրությունը՝ «Այրարատը», որը նվիրված էր Հայաստանի համանուն գավառի տեղադրությանը և որը լույս աշխարհ եկավ «Սիսուան և Լևոն Մեծագործից» մոտ հինգ տարի հետո, Վենետիկում:

«Այրարատի» հրատարակությունը լրիվ տեսքով ավարտվեց 1890 թ., իսկ աշխատությանը փոքր-ինչ ծանոթ ամեն մարդ զիտե, թե մեր ժողովրդի կյանքում

ինչ ժամանակաշրջան էր անցյալ դարի 90-ական թթ.: Ոչ մուսուլման ազգերի վերաբերյալ վայրագության հասնող խստությունների, ամենամեղ արարքի մեջ «սլետական դավաճանություն», «օսմանյան կայսրության ամբողջականությունը քայքայելու փորձ» տեսնելու, կամայականությունների տարիներ էին դրանք, որոնք կապվում էին «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի անվան հետ: «Հայրենիք», «ազատություն», «անկախություն», «փրկություն» և այլ բառերի օգտագործումը դիտվում էր որպես սլետական հանցագործություն: Եվ ահա այսպիսի պայմաններում հրապարակ է գալիս Ալիշանի աշխատությունը, որը կրում էր «Այրարատ» անունը, որի սոսկ կիրառությունը և առավել ևս՝ աշխատության մեջ արժարժված մտքերն ու դրույթները 1890-ական թթ. պայմաններում կատարյալ մեղսագործություն էին թվում: Դիրքը լույս աշխարհ գալուն պես, որպես մեղադրանք, տասնյակ անգամ կրկնվեց առաջաբանում հեղինակի արած կրքոտ հայտարարությունը. «Միտք իմ և բարք, որպէս և վիճակ և կնիք՝ հայրենասիրութիւն խնդրեն դիտադականն. այնպե՛ս սիրեմ և համբուրեմ զհայրենիս, որպէս ի մանկութեանս զհայր եւ զմայր» (էջ 1): Օրինակներ կարելի է բերել ինչքան ասես, և այստեղից էլ հասկանալի է դառնում նախ՝ որ Ալիշանը իր գիտական գործունեությամբ էլ արժարժում էր նույն ազատաբաղձ, հայրենասիրական տրամադրությունները, ինչ որ անում էր գեղարվեստական գրականության միջոցով, և երկրորդ՝ հասկանալի է դառնում, թե ինչու «Այրարատի» հրատարակվելուց հետո նրա նկատմամբ եղած հալածանքները պետք է ամօքի մեծ շափերի հասնեին: Այդ հալածանքները ծայր առան դեռ 1885 թ., երբ թուրքական կառավարությունը արգելեց հենց նոր լույս տեսած «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության մուտքը օսմանյան կայսրության սահմանները, պատճառաբանելով, որ նրա ճոխ հայրենասիրական առաջաբանը գրգռում է օսմանահպատակ ռայայի միտքը և նրան հուզումների է դրդում: Իսկ երբ հրատարակվեց «Այրարատը», այսինքն՝ 1890-ական թթ., արգելվեց Ալիշանի՝ առանց բացառության բոլոր աշխատությունների մուտքը Թուրքիայից դուրս գտնվող մտավորականների շրջանում: «Հանդես ամսօրյան» (1890 թ. № 10. գրախոս՝ Հ. Տաշյան), «Արձագանքը» (1890 թ. № 20. գրախոս՝ Ստ. Մալխասյանց), «Նոր դարը» (1890 թ. № 170. գրախոս՝ Պ. Պոռչյան), «Մշակը» (1901 թ. № 256. գրախոս՝ Ստ. Մալխասյանց) և բազում ուրիշ պարբերականներ հրատարակեցին դրվատական գրախոսականներ Ալիշանի ու նրա աշխատության մասին, վեր հանեցին գրքի արժեքը, ամփոփված վիթխարի նյութի նշանակությունը հայագիտության ու աշխարհագրագիտության համար, բացահայտեցին այն անփոխարինելի դերն ու նշանակությունը, որն ունի այդ գործը:

Ընդամենը երեք տարի անց Ալիշանը գրեց չորրորդ նշանավոր աշխատությունը՝ «Սիսականը», որը հրատարակվեց Վենետիկում 1893 թ. և որտեղ հեղինակը քննության առարկա էր դարձրել Սյունյաց աշխարհը: Չավոք սրտի, այս աշխատությունը եղավ Ալիշանի գիտական ձեռնարկման կարիսպի երդը: Հայաստանի բոլոր «աշխարհների» մասին քննական ուսումնասիրություն գրելու 20—22 հատորանոց պլանը իրագործվեց չորս անուն գործով միայն, հեղինակի մահվան պատճառով անկատար մնաց⁸:

8 Ինչպես մեզ հայտնեցին Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներ Սերովբի Աղըլյանը և Եփրեմ Տեր-Ղազարյանը, Ալիշանը հիմնականում ավարտել է այդ շարքի հինգերորդ

Անկատար մնացին և ուրիշ մտահղացումներ էլ: Չամբողջացվեց բանաստեղծությունների նոր ժողովածուն, որը պետք է ունենար «Սենեակ սրտի» վերնագիրը և որը պետք է ընդգրկեր Ալիշանի՝ հիմնականում վերջին շրջանում գրած չափածո (հնարավոր է և արձակ) ստեղծագործությունները: Չավարտվեց տարբեր ձևագրերից հավաքված՝ հայկական հին և միջնադարյան ժողովրդական երգերի «Երգարան» խորագիրը կրող ժողովածուի պատրաստումը, որն իրականացվել էր հազիվ կիսով չափ: Անկատար մնաց «Հիշատակարանք» կոչվող աշխատությունը, ուր Ալիշանը տարիների ընթացքում հավաքել էր բազում ձևագրերի հիշատակարաններ և կցել նրանց իր մեկնությունները: Կիսատ մնաց «Հայ վանորայք յնվրոպա» ուսումնասիրությունը, որը գրվել է մոտ 500 էջ, ըստ հեղինակի ծրագրի՝ մոտ կեսը, և որտեղ նա մտադրվել էր տալ նվրոպայում գտնվող հայկական բոլոր վանքերի գիտա-բանասիրական պատմությունը: «Հայ-Վենետիկ» սկզբունքով Ալիշանը «Ղրիմ-Կաֆա» վերնագրով մտադրվել էր գրել այդ երկրի գիտական պատմությունը, և այդ էլ մնաց կիսատ...

Շատ բաներ մնացին անկատար. բայց արվածը կազմում է մոտ քառասուն հատոր՝ հայագիտական-բանասիրական-գեղարվեստական-թարգմանական մի վիթխարի ժառանգություն:

ГЕВОНД АЛИШАН

(К 150-летию со дня рождения)

С. А. ШТИКЯН

(Р е з ю м е)

Гевонд Алишан (1820—1901) является одной из крупных фигур в армянской литературе и арменоведении. Его литературное наследие насчитывает свыше сорока томов, не считая множества статей и исследований, опубликованных в периодических изданиях. Это наследие многогранно и разносторонне: стихотворения и поэмы (известные под названием «Песни Патриарха»), фундаментальные географические исследования, такие, как «Ширак» (Венеция, 1881), «Сисуан» (Венеция, 1885), «Айрарат» (Венеция, 1890), «Сисакан» (Венеция, 1893), ряд арменоведческих трудов («История Вардана-вардапета», Венеция, 1862, «Историк Киракос», Венеция, 1864, «Шноралл и его творения», Венеция, 1873, «Смбат Гундстабль и законник Антиоха», Венеция, 1876 и др.), многие из которых не устарели и поныне. Перу Алишана принадлежит множество переводов с английского (Байрон, Лонгфелло), немецкого (Шиллер), французского (Ламартин, Лафонтен, Расин), итальянского (Сильвио Беллико, Альфонс Ликуринос) языков.

В статье характеризуются вышеуказанные литературные и арменоведческие труды Алишана.

գործը՝ «Վասպուրականը» (երկու հատոր), որն առաջմ գտնվում է հեղինակի անձնական արխիվում և սպասում է իր հրատարակողին: